Ծրագիրը ֆինանսավորվում է
Եվրոպական միության կողմից

Եկամտային հարկի 1%-ը ՀՀ հասարակական կազմակերպություններին փոխանցելու առաջարկություն. հիմնավորում և միջազգային փորձի ուսումնասիրություն

Ծրագիրը ֆինանսավորվում է
Եվրոպական միության կողմից

Բովանդակություն

Նախաբան

Միջազգային փորձի ուսումնասիրություն

1% -ի մասին օրենքի դրական կողմերը

Առաջարկություններ

Ծրագիրը ֆինանսավորվում է
Եվրոպական միության կողմից

Նախաբան

Արևելյան Եվրոպայում և ԱՊՀ երկրներում հասարակական կազմակերպությունների ոլորտը սկսեց զարգանալ 1990-ական թվականների վերջերից: Դրան նպաստեցին միջազգային դոնոր կազմակերպությունների կողմից քաղաքացիական հասարակության կազմակերպություններին (այսուհետ՝ ՔՀԿ) հատկացվող դրամաշնորհները:

Միաժամանակ, նկատի ունենալով ՔՀԿ-ների կայունության ապահովման կարևորությունը նաև պետական համակարգի կողմից, պետական մարմինները սկսեցին կյանքի կոչել տարբեր գաղափարներ: Հիշյալ գաղափարներից մեկն էլ հանդիսանում է **1%-ի նվիրաբերությունը,,** որի միջոցով հարկատուներին հնարավորություն կտրվի եկամտային հարկից 1%-ը նվիրաբերել ՔՀԿ-ներին:

Հիշյալ գաղափարը ուղղված է բացառապես ՔՀԿ-ների ֆինանսական կայունության ապահովմանը: Քիչ չեն այն դեպքերը, երբ դրամաշնորհներ տրամադրող դոնոր կազմակերպության՝ կոնկրետ տարածաշրջանից հեռանալու, ֆինանսավորումը դադարեցնելու կամ ֆինանսավորված ծրագրերը ավարտելուց հետո ՔՀԿ-ները հայտնվում են ֆինանսապես ծանր վիճակում և ի վիճակի չեն լինում ապահովելու իրենց հատուկ դերը և մասնակցելու հանրային կյանքին՝ ներկայացնելով հասարակության տարբեր զանգվածների շահերը:

Ինչպես վերը նշվեց, տարբեր երկրներում նման իրավիճակից դուրս գալու և ՔՀԿ սեկտորը ֆինանսապես առողջացնելու ճանապարհներից մեկը հանդիսացավ 1%-ի վերաբերյալ օրենքի ընդունումը, որը ոչ միայն հնարավորություն ընձեռեց ՔՀԿ-ներին **ձեռք բերել ֆինանսական կայունություն, այլև դառնալ լիովին հաշվետու՝** իրեն ֆինանսական միջոցներ տրամադրող անձանց համար: Հարկ է նշել, որ նմանատիպ օրենքներ ընդունվել են Հունգարիայում, Սլովակիայում, Լեհաստանում, Ռումինիայում, Ուկրաինայում, Լիտվայում, Մոլդովայում և մի շարք այլ եվրոպական երկրներում:

1) Միջազգային փորձի ուսումնասիրություն

1.1. Լեհաստանի Հանրապետություն

«Հասարակական շահի և կամավորական աշխատանքի մասին» օրենքի համաձայն՝ 2004 թվականի հունվարի 1-ից ֆիզիկական և իրավաբանական անձինք հնարավորություն են ստանում նվազեցնել իրենց տարեկան եկամտային հարկը՝ դրա ամբողջ գումարի 1%-ի չափով՝ այն նվիրաբերելով իրենց նախընտրած կազմակերպությանը:

Այս հնարավորությունը դրսևորվում է 2 հիմնական ուղղություններով.

- ցանկացած (անսահմանափակ) գումար վճարել հանրային շահ հետապնդող կազմակերպությանը, բայց նվիրաբերություն կատարելու մասին դիմումը ներկայացնելու պարագայում եկամտային հարկը նվազեցվում է բացառապես 1%-ով,
- ներկայացնել հարկային հաշվետվություն՝ հաշվարկելով վճարված տարեկան եկամտային հարկի 1%-ին համարժեք գումարը և այն նվիրաբերել նվիրատուի կողմից ընտրված հանրային շահ ներկայացնող կազմակերպությանը (քայլ առ քայլ նկարագրությունը ներկայացված է ստորև).

Եկամտային հարկի նվիրաբերման նախապայմանները.

- Ֆիզիկական անձի կողմից կարող է նվիրաբերվել անձնական եկամտային հարկի միայն 1%-ը:
- Նվիրաբերումները կարող են կատարվել բացառապես որպես հանրային շահ ներկայացնող և պետական գրանցում ստացած կազմակերպությանը:
- Վճարումը պետք է կատարվի համապատասխան հանրային շահ ներկայացնող կազմակերպության բանկային հաշվեհամարին՝ եկամտային հարկի վճարմանը

հաջորդող տարվա հունվարի 1-ից ապրիլի 30-ը ընկած ժամանակահատվածում, բայց ոչ ուշ, քան հարկային հաշվետվությունը ներկայացնելու օրը[1]:

<u>Նվիրաբերություններ կատարելու ընթացակարգը.</u>

Քայլ առաջին. կազմակերպության ընտրություն: Այս փուլում հարկ վճարող կազմակերպությունը ընտրում է մեկ կամ մի քանի հանրային շահ հետապնդող կազմակերպություններ, որոնց նվիրաբերվելու է եկամտային հարկի 1%-ին համարժեք գումարը[2]:

Քայլ երկրորդ. տվյալների ստուգում: Այս փուլում հարկ վճարողը ձեռք է բերում ՀԿ-ի՝ վճարումը կատարելու համար անհրաժեշտ տվյալները, որոնցից են հանդիսանում տվյալ կազմակերպության անվանումը, հասցեն, բանկային հաշվի համարը: Տվյալները կարող են տրամադրվել հենց ՀԿ-ի կողմից, օրինակ՝ իրենց պաշտոնական համացանցային էջում:

Քայլ երրորդ. համապատասխան ձևի լրացում և 1% եկամտային հարկի հաշվարկում: Այս փուլում ֆիզիկական կամ իրավաբանական անձը լրացնում է համապատասխան ձևը և հաշվարկում է հարկի գումարը: Բիզնես գործունեություն իրականացնող հարկ վճարողները վճարում են գանձապետական հարկ, որը եկամտային հարկի տեսակ է հանդիսանում: Գանձապետական հարկ վճարելու պարագայում իրավաբանական անձանց կողմից հարկային հայտարարագրերը ներկայացվում են մինչև տվյալ ֆինանսական տարվա հունվարի վերջը:

Քայլ չորրորդ. փոխանցման ձևի լրացում: Լրացված փոխանցման ձևը պետք է պարունակի նվիրատուի (հարկ վճարողի) անունը, ազգանունը, հասցեն, փոխանցվող գումարի չափը, ընտրված կազմակերպության անվանումը, վճարման նպատակը.

---

[1] Նվիրաբերման 2 տեսակների իրավական հիմքերին, կարգավորումներին, ընթացակարգին, վիճակագրությանը ծանոթանալու համար անցեք հետևյալ հղմամբ՝ **<u>National Court Registry</u>** **<u>http://www.ekonomiaspoleczna.gov.pl/How,to, donate,1,559.html</u>**, տեղեկատվությունը հասանելի է՝ Department of Social Economy and Public Benefit, Government of Poland:

[2] Ստորև տրված 2 հղումները հանրային շահ հետապնդող կազմակերպությունների պաշտոնական ռեգիստրի վեբ էջերն են՝ <u>http://bopp.pozytek.gov.pl</u> <u>http://ww.opp.ms.gov.pl</u>:

օրինակ՝ վճարման նպատակ կարող է հանդիսանալ գումարը փոխանցել հանրային շահին ծառայող կազմակերպությանը:

Քայլ հինգերորդ. վճարում կատարելը: Այս փուլում հարկ վճարողը համապատասխան գումարը փոխանցում է ընտրված կազմակերպության հաշվեհամարին: Փոխանցումը պետք է կատարվի եկամտային հարկի վճարմանը հաջորդող տարվա հունվարի 1-ից ապրիլի 30-ը ընկած ժամանակահատվածում, բայց ոչ ուշ, քան հարկային հաշվետվությունը ներկայացնելու օրը: Վճարում կարելի է կատարել բանկում (նաև առցանց տարբերակով) կամ փոստային բաժանմունքում:

Քայլ վեցերորդ. նվազեցնել եկամտային հարկը 1%-ով: Այս փուլում հարկատուները իրենց կողմից ընտրված հասարակական կազմակերպությանն են փոխանցում, իրենց եկամտահարկի 1%-ը: Փոխանցումները ամսական կտրվածքով են իրականցվում, ինչի արդյունքում տարեկան կամ կիսամյակային կտրվածքով հաշվետություն ներկայացնելիս նվիրաբերություն կատարած հարկատուները ազատվում են նվիրաբերված 1%-ի չափով վճարումներ կատարելուց:

Քայլ յոթերորդ. հարկային հաշվետվության ներկայացում: Այս փուլում հարկ վճարողը եկամտահարկի գրասենյակ է ներկայացնում հարկային հաշվետվությունները: Սույն գործընթացը պետք է տեղի ունենա մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա ապրիլի 30-ն ընկած ժամանակահատվածում: Հարկ վճարողը պարտավոր է պահպանել վճարման ապացույցը, որը պետք է հարկային մարմիններին ներկայացվի հարկային ստուգումների ընթացքում:

1.2. Սլովակիայի Հանրապետություն

Սլովակիայում ֆիզիկական և իրավաբանական անձինք իրավասու են նվիրաբերել իրենց տարեկան եկամտային հարկի 2%-ը՝ հարկային մարմնին տեղեկացնելով այդ գումարը՝ ՔՀԿ-ներին նվիրաբերելու մասին: Նվիրաբերումը լրացուցիչ բեռ չի առաջացնում սուբյեկտների համար, այլ իրենից ներկայացնում է վճարվող եկամտային հարկի վերաբաշխում: Ֆիզիկական անձանց դեպքում նվիրաբերումը կատարվում է **հօգուտ մեկ ՔՀԿ-ի,** մինչդեռ իրավաբանական անձինք

կարող են նախատեսել համապատասխան գումարի բաշխում **երկուսից ավելի** ՔՀԿ-ների միջև:

Եթե անձը, ով որպես կամավոր առնվազն 40 ժամ աշխատել է որակավորում (ՔՀԿ-ի կողմից որակավորված ճանաչելու չափանիշները ներկայացվել են ստորև) ունեցող ՔՀԿ-ներում, ապա վերջինս կարող է պահանջել, որ տարեկան եկամտահարկի 3%-ը փոխանցվի այդ ՔՀԿ-ներին:

Այս արտոնություններից կարող են օգտվել այն ՔՀԿ-ները, ովքեր հանդիսանում են քաղաքացիական ասոցիացիաներ, հիմնադրամներ և կրոնական կազմակերպություններ, որոնց ընդհանուր թիվը Սլովակիայում հասնում է 25286-ի:[3]

ՔՀԿ-ները պարտավորվում են նվիրաբերված գումարները օգտագործել իրենց կանոնադրությամբ սահմանված նպատակների իրականացման համար և հարկային մարմիններին ներկայացնել իրենց պարտավորությունների կատարումը հաստատող փաստաթղթեր:[4] Շահառուն հասարակական կազմակերպությունները պարտավորվում են նվիրաբերված գումարը տնօրինել հետևյալ նպատակներից մեկի կամ մի քանիսի ուղղությամբ:

1) առողջապահության աջակցություն և պաշտպանություն (հատկապես թմրանյութերի կախվածության կանխարգելում և բուժում),
2) ֆիզիկական կուլտուրայի աջակցություն և զարգացում,
3) սոցիալական ծառայությունների մատուցում,
4) մշակութային արժեքների պահպանություն,
5) կրթության աջակցություն,
6) մարդու իրավունքների պաշտպանություն,
7) շրջակա միջավայրի պաշտպանություն,
8) գիտության և հետազոտությունների աջակցություն,
9) կամավորական աշխատանքների կազմակերպում և միջնորդություն (Հարկային օրենսգրքի հոդված 50(5)):

[3] Ցուցակին ծանոթանալու համար տես հղումը՝ https://www.dvepercenta.sk/
[4] Տե՛ս Սլովակիայի Հանրապետության «Եկամտային հարկի մասին» օրենք, 50-րդ բաժին, 6-րդ հոդված:

Նվիրաբերություն կատարելու համար նախապայման է հանդիսանում այն, որ ո՛չ նվիրատուն և ո՛չ էլ նվիրաբերություն ստացող ՔՀԿ-ն չպետք է չմարված պարտքեր, կամ չվճարված հարկային կամ մաքսային պարտավորություններ ունենան:

1.3. Ռումինիա

Ռումինիայում ՔՀԿ-ներին բարեգործական նվիրաբերություններ կատարելը պայմանավորված է նվիրատուի ֆիզիկական կամ իրավաբանական անձ լինելու հանգամանքով:Ռումինիայում նվիրաբերություն կարող է կատարվել եկամտային հարկի 2%-ի չափով:

Պետք է նկատել, որ ֆիզիկական անձի համար սահմանված հարկման ոչ ենթակա նվիրաբերության սխեման բավականին նման է Սլովակիայի սխեմային: Եկամտային հարկի 2%-ը կարող է ֆիզիկական անձի կողմից փոխանցվել ընտրված ՔՀԿ-ին: Նվիրաբերության համար իրավական հիմք է հանդիսանում Ռումինիայի հարկային օրենսգրքի 92(1) հոդվածը, ինչպես նաև Կառավարության 138/2004 որոշումը: Որակավորված ՔՀԿ-ներ են համարվում շահույթ չհետապնդող այն կազմակերպությունները, որոնք ակտիվորեն խթանում են հետևյալ ոլորտների զարգացմանը.

- կրոն.
- մշակույթ.
- արվեստ.
- շրջակա միջավայր.
- գիտական հետազոտություններ.
- բարեգործություն.
- մարդու իրավունքների պաշտպանություն.
- տնտեսական, առողջության, սոցիալական ծառայությունների աջակցություն, առողջապահություն, սոցիալական օգնություն.
- սոցիալական և համայնքային զարգացում
- մասնագիտական հետաքրքրությունների ներկայացուցչություն.

- պատմական հուշարձանների պահպանություն, վերականգնում, պահպանում և գնահատում, արժևորում:

Հարկ է նշել, որ վերոնշյալ ոլորտներում ներգրավված պետական մարմինները և հաստատությունները ևս իրավասու են ստանալ հարկերից ազատված նվիրաբերություններ:

Իրավաբանական անձանց պարագայում ընդհանուր կանոնն այն է, որ նվիրաբերելու ցանկություն ունեցող ընկերությունն կարող է նվիրաբերություն կատարել իր շրջանառությունից մինչև 0.5%-ի չափով, կամ հարկային պարտավորության 20%-ի չափով, (Ռումինիայի Հարկային օրենսգիրք 25-րդ հոդվածի 4-րդ մաս): Այնուամենայնիվ, սույն իրավական կարգավորումը գործում է 2018 թվականից, և դրանից կարող են օգտվել այն իրավաբանական անձինք, ովքեր ունեն 1 մլն եվրոյից ավել շրջանառություն: Ավելի պակաս շրջանառությամբ կազմակերպությունները հարկման մեկ այլ համակարգի սուբյեկտ կարող են հանդիսանալ:

1.4. Հունգարիա

Հունգարիայում ֆիզիկական անձինք կարող են իրենց եկամտային հարկի 1%-ը նվիրաբերել՝

- ասոցիացիաներին, հիմնադրամներին և պետության կողմից հիմնադրված հիմնադրամներին,
- պետական հաստատություններին, ինչպիսիք են օրինակ՝ գրադարանները, թանգարանները,
- լրացուցիչ՝ ևս 1% կարող է նվիրաբերվել հունգարական **եկեղեցուն**, կամ՝
- որպես այլընտրանք՝ տարեկան կտրվածքով Կառավարության կողմից ազգային կարևորություն ստացած հարցի լուծմանը, օրինակ՝ ջրհեղեղի կամ շտապ բուժօգնության ծառայությունների համար:[5]

Գոյություն ունեն հասարակական կազմակերպություններին ներկայացվող մի շարք պահանջներ, որոնք հիմք են համապատասխան 1%-ի տրամադրման համար: Այս

[5]Հղումը հասանելի է՝ http://www.icnl.org/research/library/files/Hungary/miracles.pdf:

պահանջներից հիշատակման են արժանի հկների կողմից հաշվետվության ներկայացումը և հարկ վճարողի միջոցների նպատակային օգտագործումը:

Շահառու ՀԿ-ն կարող է ստանալ նվիրաբերություն, եթե ունի առնվազն երկու տարվա պետական գրանցում (բացառություն են կազմում հանրային (հասարակական) շահ հետապնդող կազմակերպությունները, որի համար սահմանված է պետական գրանցման առնվազն 1 տարվա ժամկետ): Ի լրումն հիշյալ կանոնի՝ նվիրաբերություն կարող են ստանալ.

- ՀԿ-ները, որոնք պետք է իրականացնեն առնվազն մեկ հանրային շահ հետապնդող գործունեությամբ (the Law on Public Benefit Organizations, hereinafter: the PBO Law, determines 22 types of these activities[6]),
- ՀԿ-ները, ինչպես և մյուս հանրային շահ ներկայացնող կազմակերպությունները, որոնք ունեն քաղաքական չեզոքություն.
- Եվ վերջապես, ՀԿ-ն չպետք է ունենա պետական պարտք (օր.՝ հարկային, սոցիալական, կենսաթոշակային): Այնուամենայնիվ, 2002թվականից սկսած ՀԿ-ներին թույլատրվել է ստանալ նվիրաբերություն՝՝ չմարված պարտքեր ունենալով հանդերձ, պայմանով, որ վերջիններս լիազորում են հարկային մարմնին պարտքը գանձել իրենց նվիրաբերված 1%-ից:

1.5. Ուկրաինա

Ուկրաինայում նվիրաբերությունները հարկային պարտավորությունների նվազեցման 4 ենթատեսակներից մեկն է համարվում: Ուկրաինական պետական գրանցում ունեցող բարեգործական և շահույթ չհետապնդող կազմակերպություններին տրված նվիրաբերությունները ենթակա են հարկային նվազեցման՝ հարկատուի եկամտային հարկի՝ 4%-ը չգերազանցող գումարի չափով:

Ընդհանուր նվազեցումը չի կարող գերազանցել աշխատավարձի տեսքով ստացված հարկվող եկամտի չափը (գործնականում, աշխատավարձը, որը ստացվել է Ուկրաինայի

[6] Տե՛ս Act CLVI of 1997 on public benefit organizations, հոդված. 26 (a):

հարկային գործակալներից): Բոլոր փոխանցումները պետք է պատշաճ կերպով ձևակերպվեն:

Ժառանգության և նվերների որոշ տեսակներ անհատների կողմից ներառվում են իրենց հարկման ենթական եկամտի մեջ, մինչդեռ բարեգործական կազմակերպության դեպքում դրանք կազմակերպության եկամտի մաս չեն կազմում:[7]

Ուկրաինայի հարկային օրենսգրքի 166.3 հոդվածը սահմանում է այն եկամուտների ցանկը, որոնցից հնարավոր է նվիրաբերություններ իրականացնել հասարակական կազմակերպություններին: Ըստ այդմ՝ *հարկատուն իրավասու է հարկային նվազեցման ճանապարհով փոփոխություններ կատարել եկամտային հարկի մեջ: Հարկատուն իրավունք ունի ներառել իր հարկվող եկամտի նվազեցումը տվյալ տարվա հաշվապահական հաշվառման արդյունքներում, հաշվի առնելով սույն հոդվածի դրույթները:*

Ուկրաինայում գոյություն ունեն բարեգործական կազմակերպության 2 տեսակներ՝ բարեգործական հիմնադրամներ, որոնք ստեղծվել են «Բարեգործական կազմակերպությունների մասին» օրենքի հիման վրա, և մասնավոր հիմնադրամներ, որոնց գործունեության առանձնահատկությունները սահմանված են Քաղաքացիական օրենսգրքով: Հիմնադրամի երկու տեսակների համար էլ սահմանված է ձևավորման և կառավարման միանման կարգ:

«Բարեգործության մասին» օրենքի 157-րդ հոդվածի համաձայն՝ բարեգործական հիմնադրամները և բարեգործական կազմակերպությունները օրենքով սահմանված կարգով ազատվում են կանխիկ կամ դրամական տեսքով ստացված նվիրաբերության համար եկամտային հարկ վճարելուց, քանի որ այն համարվում է պասիվ եկամուտ:

Պետական մարմիններից կամ տեղական ինքնակառավարման մարմիններից ստացված դրամաշնորհները նույնպես հարկման չեն ենթարկվում: Գրանցված բարեգործական կազմակերպությունների կողմից ստացված անվճար ապրանքներն ու ծառայությունները, ինչպես նաև այդ կազմակերպությունների կողմից իրենց

[7]Հղումը հասանելի է՝ https://taxdesignation.org/ukraine/

բարեգործական աշխատանքների ստացողներին տրամադրվող անվճար ապրանքներն ու ծառայությունները ԱԱՀ-ով չեն հարկվում:[8]

1.6. Լատվիա

Լատվիայի «Անձնական եկամուտների մասին» օրենքը նախատեսում է, որ եթե անձը իր եկամուտներից նվիրաբերություններ է կատարել ոչ առևտրային կազմակերպություններին, ապա տվյալ անձը ազատվում է որոշակի տոկոսով եկամտահարկ վճարելուց: Սակայն անհրաժեշտ է բավարարել հետևյալ պայմանները.

- Նվիրաբերության գումարը պետք է փոխանցվի Լատվիայի Հանրապետությունում պետական գրանցում ունեցող այնպիսի ոչ առևտրային կազմակերպության, որին տրվել է հասարակական շահերին ծառայող կազմակերպության կարգավիճակ, կամ որը գրանցվել Լատվիայում կամ Եվրոպական Միության անդամ հանդիսացող այլ պետության տարածքում կամ երրորդ պետության տարածքում և երրորդ պետության մեջ գրանցված է որպես հասարակական շահին ծառայող կազմակերպություն:
- Նվիրաբերությունը չի կարող կատարվել տվյալ կազմակերպության աշխատակից հանդիսացող կամ աշխատակիցների հետ անմիջական շահերի մեջ գտնվող անձանց կողմից:
- Նվիրաբերության ենթակա գումարը չի կարող գերազանցել տվյալ անձի կամ կազմակերպության ընդանուր հարկման ենթական եկամուտների 20%-ը: Նվիրաբերությունը իրականացվում է նախքան հարկերի վճարումը: Նվիրաբերության իրականացումից հետո նվիրաբերված գումարը նվազեցվում է հարկ վճարողի հարկային հաշվեկշռից:[9].

1.7. Մոլդովա

[8] Տե՛ս «Ավելացված արժեքի հարկի մասին» օրենքի 197, 197.1 և 197.1.15 հոդվածները:
[9] Հղումը հասանելի է՝ http://www.vvc.gov.lv/export/sites/default/docs/LRTA/Citi/On_Personal_Income_Tax.doc:

«2% օրենք»-ը մոլդովական խորհրդարանի կողմից ընդունվել է 2014 թվականի հուլիսի 18-ին[10], սակայն ուժի մեջ է մտել 2016 թվականին: 2016 թվականի նոյեմբերին Կառավարությունը ընդունել է «Տոկոսային նշման մեխանիզմի մասին» կանոնակարգը, որը «2% օրենք»-ի կիրառման գործիք է հանդիսանում:[11] Կանոնակարգը սահմանում է մեխանիզմ, որի համաձայն՝ անհատ հարկատուները կարող են իրենց եկամտային հարկի 2%-ը նվիրաբերել իրենց կողմից ընտրված շահառուներին: Նվիրաբերություն ստացող սուբյեկտները երկուսն են՝ **ոչ-առևտրային կազմակերպությունները և կրոնական կազմակերպությունները:** Օրենքի տեսանկյունից հստակ պահանջ է սահմանված այն մասին, որ վերջիններս ներգրավված պետք է լինեն **հանրային շահի պաշտպանության մեջ:** Օրենքը նշված երկու կազմակերպությունների համար խաղի հավասար կանոններ է սահմանել, իսկ այն խախտելու դեպքում վարչական պատասխանատվություն է նախատեսվում:

Որպեսզի ոչ-առևտրային կազմակերպությունները հնարավորություն ստանան օգտվելու 2%-ի օրենքի առավելությունից, նրանք պարտավոր էին արդարադատության նախարարությունում գրանցվել որպես այդ օրենքի շահառուներ: Հայտի լրացման ձևը հասանելի է արդարադատության նախարարության պաշտոնական կայքէջում:[12] Գրանցումը կարող է տեղի ունենալ արդարադատության նախարարության կայքէջում կամ էլ դիմումատուն իր դիմումը կարող է ուղարկել էլեկտրոնային փոստի միջոցով: Կազմակերպությունները գրանցվելուց հետո տեղեկատվություն են ստանում իրենց գրանցված լինելու վերաբերյալ:

Գրանցման առաջին տարում ավելի քան 484 ոչ առևտրային կազմակերպություններ գրանցվեցին այդ համակարգում, որոնցից 413-ը հասարակական կազմակերպություններ և հիմնադրամներ էին, իսկ 71-ը՝ կրոնական կազմակերպություններ: Ավելի քան 40 կազմակերպությունների գրանցումը մերժվել էր հետևյալ հանգամանքներով պայմանավորված.

---

[10] Law no.158 of 18 July 2014 that amended the Tax Code no.1163 of 24 April 1997, Law no.837 on Civic Associations of 17 May 1996, Law no.125 on Freedom of Conscience, Thinking and Religion of 11 May 2007

[11] Government Decision no.1286 on Approving the Regulation on the Percentage Designation Mechanism of 2 November 2016, http://lex.justice.md/index.php?action=view&view=doc&lang=1&id=367801.

[12] The application ca be accessed online at http://www.justice.gov.md/slidepageview.php?l=ro&idc=214.

1) չեն համապատասխանել գրանցման չափանիշներին.
2) նախորդ ֆիսկալ տարվա ընթացքում ունեցել են չվճարված հարկային պարտավորություններ:

Մյուս դեպքերում արդարադատության նախարարությունը մերժել է գրանցումը, քանի որ կազմակերպությունները չեն եղել ոչ առևտրային:[13]

2017 թվականը Մոլդովայում առաջին տարին էր, երբ անհատ հարկատուները իրավունք ունեին իրենց եկամտահարկի 2%-ը նվիրաբերել ոչ առևտրային կազմակերպություններին: Օրենքի կարգավորումների համաձայն՝ ֆիզիկական անձը կազմում է եկամտային հարկի հայտարարագիրը և այն հարկային մարմիններին ներկայացնում հունվարից-ապրիլ ընկած ժամանակահատվածում: Նվիրաբերություն իրականացնող անձի վերաբերյալ տեղեկատվությունը գաղտնի է պահվում: Շահառու կազմակերպությունները, կախված ստացված եկամուտից, իրենց վրա են կրում վարչական ծախսերը: Նվիրաբերված գումարը կազմակերպությունները կարող են օգտագործել երկու տարվա ընթացքում: Օգտագործման ժամկետի վերջում շահառու կազմակերպությունները հաշվետվություն են ներկայացնում, թե ինչպես են օգտագործել նվիրաբերված գումարները: Նվիրաբերված միջոցները թերօգտագործելու կամ օրենքով սահմանված կարգով հաշվետվություն չներկայացնելու դեպքում նախատեսված է վարչական պատասխանատվություն, որը կարող է արտահայտվել **տվյալ կազմակերպությանը շահառուների ցանկից հեռացնելով:**

Ամեն տարի պետական եկամուտների կոմիտեն հրապարակում է այն կազմակերպությունների անունները, որոնք նվիրաբերություններ են ստացել: Վիճակագրությունը ցույց է տալիս, որ 2%-ի մեխանիզմի կիրառելիությունը Մոլդովայում մեծ տարածում չի ստացել: 2017 թվականի ընթացքում 21204 անձիք իրենց եկամուտների մինչև 2%-ը տոկոսը նվիրաբերել են գրանցված 484 կազմակերպությունից 302-ին (կամ ընդհանուր ի 62%-ին): **Նվիրաբերություն իրականացնելու հնարավորություն ունեցող հարկատուների միայն 1.7%-ն** է նվիրաբերություն իրականացրել 2017 թվականին**:** Այս թիվը 2018 թվականին աճում է մինչև 2.4%-ի:

[13] Ministry of Justice, press release of 2 January 2017 on the results of registration in the list of 2% beneficiaries, available at: http://justice.gov.md/libview.php?l=ro&idc=4&id=3298.

Ոչ առևտրային կազմակերպությունների **միայն 5%-ն** է օգտվել այս օրենքով սահմանված հնարավորություններից, ինչը ցույց է տալիս, որ **հասարակությունն ընդհանուր առմամբ անտեղյակ է այդ օրենքից:**

Հատկանշական է, որ մասնագիտական գործունեությամբ զբաղվող անձանց **հնարավորություն չի տրվել նվիրաբերություններ կատարել**: Այդ անձինք են հանդիսանում՝ **իրավաբանները, հաշվապահները, անհատ ձեռնարկատերերը, հաշտարարները և այլն:**[14] Օրենսդրորեն նման սահմանափակման նախատեսումն ինքնին բավականին վիճահարույց է, քանի որ այդ մասնագետները փաստացի զրկվել են քաղաքացիական հասարակության աջակցություն տրամադրելու հնարավորությունից:[15]

Մոլդովական փորձը ուսումնասիրելիս հանգում ենք այն հետևությանը, որ արդյունավետ մեխանիզմների բացակայության և հանրային իրազեկումների պակասի պատճառով 2%-ի մեխանիզմի ներդրումը ոչ առևտրային կազմակերպությունների համար **ֆինանսական կայունություն չի ապահովել:** Ըստ վիճակագրական տվյալների՝ օրենքի գործարկման առաջին տարում նվիրաբերությանստացած կազմակերպությունների մոտ 2%-ը շատ առաջընթաց է ունեցել իրենց ֆինանսական կայունությունն ապահովելու տեսանկյունից: Մյուս կողմից էլ, պետք է փաստենք, որ **2%-ի օրենքը օգնել է ոչ առևտրային կազմակերպություններին մեծացնելու իրենց շփումը հասարակության հետ և աջակիցներ ձեռք բերել:**

Հատկանշական է այն հանգամանքը, որ հարկատուների կողմից նվիրաբերությունների **ավելի քան 24 տոկոսը չի ծառայել իր բուն նպատակին,** քանի որ նվիրաբերություն ստացող կազմակերպության մոտ չվճարված հարկային պարտավորություններ են հայտնաբերվել, ինչն էլ հիմք է հանդիսացել, որպեսզի նրանք իրավունքի ուժով զրկվեն նվիրաբերություններ ստանալու հնարավորությունից:

2) «1% - ի մասին» օրենքի դրական կողմերը

[14] See pt. 15 of the 2% Regulation, later amended by Government Decision no. 280 of 3 May 2017.
[15] Ministry of Finance, Answer 09/2-06/2016 of 18 June 2018 to LRCM request.

«1%-ի մասին» օրենքի դրական կողմերն են՝

- Ֆինանսական միջոցների բաշխումը դառնում է ավելի ժողովրդավարական, ժողովուրդը անմիջականորեն մասնակցություն է ունենում քաղաքացիական հասարակության գործունեությանը և դրական ազդակներ են ստեղծվում քաղաքացիական հասարակության հետ արդյունավետ համագործակցություն իրականացնելու համար:
- Օրենքը հնարավորություն է ստեղծում հասարակության համար հետաղարձ կապ ունենալ ՔՀԿ-ների հետ: Կազմակերպությունները շահագրգռված են լինում հասարակությանը լայնորեն ներկայացնել իրենց գործունեության հաշվետվություն:
- ՔՀԿ-ները հիմնականում իրենց ուշադրությունը սևեռում են հասարակական կյանքում առկա տարբերի խնդիրների լուծմանը և ոչ թե առաջնորդվում են ֆինանսավորող դոնոր կազմակերպությունների կողմից առաջ մղված օրակարգերով:
- Հասարակություն-ՔՀԿ սեկտոր կապը սկսում է ավելի սերտ բնույթ կրել:

Այդուհանդերձ կան մի շարք **բարդություններ**, որոնք կարող են առաջ գալ 1%-ի մասին օրենքը ընդունելուց հետո: Մասնավորապես, օրենքի ընդունումից հետո **կարող են ի հայտ գալ որոշակի կոռուպցիոն ռիսկեր**: Օրինակ, այն հնարավորություն կտա խոշոր ձեռնարկատերերին հիմնել տարբեր ՔՀԿ-ներ և նվիրաբերության միջոցով խնայել վճարվող հարկերի մի փոքր տոկոսը: Այդ իսկ պատճառով խիստ կարևոր է մշակել նվիրաբերություն ստացող ՀԿ-ների համար որոշակի չափանիշներ և արդյունավետ վերահսկողական գործիքներ:

3) Առաջարկություններ

1. ՀՀ Հարկային օրենսգրքում կատարել փոփոխություններ և ֆիզիկական և իրավաբանական անձանց հնարավորություն ընձեռել նվիրաբերելու իրենց եկամուտների 1%-ը ոչ առևտրային կազմակերպություններին և նվիրաբերված գումարի չափով հարկային նվազեցում կատարել:
2. Ստեղծել պետություն-ՔՀԿ աշխատանքային խումբ և մշակել հատուկ չափորոշիչներ ՔՀԿ-ների համար, ովքեր իրավունք կունենան օգտվել հիշյալ հնարավորությունից: Որպես օրինակ, կարող է լինել նախորդ հարկային տարում պետության հանդեպ որևէ չվճարված պարտավորություն չունենալ և այլն:
3. Նվիրաբերության առավելագույն շեմ սահմանել հարկվող եկամտային հարկի 1%-ը:
4. Ոչ առևտրային կազմակերպությունների համար պահանջ սահմանել, որպեսզի իրենց ինտերնետային կայքերում կամ միասնական էլեկտրոնային հարթակում պատադիր հաշվետվություն ներկայացնեն իրենց կողմից կատարված ծախսերի վերաբերյալ:

Սույն առաջարկությունները մշակվել են Իրավաբանների հայկական ասոցիացիայի կողմից՝ ԵՄ ֆինանսավորմամբ իրականացվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրի շրջանակներում: